ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆԿՖՈՐԹԵՅԼԻ» (ՆԱԺԱՐՈՒՅՑԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 21 - 22 (17130) ՇԱԲԱԹ 18 ՄԱՐՏԻ 2023 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ «ԻՄԵԴԻ» ՀԵՌՈՒՍՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՕՐԻՆԱԳԾԻ ՀԵՏԿԱՆՉՆՈՒՄՆ ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԽԵԼԱՄԻՏ ՈՐՈՇՈՒՄ ԷՐ»

«ԹՈՒՅԼ ՉԵՆՔ ՏԱ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՃԱԿԱՏ ԲԱՑԵԼ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը, երկրորդ ընթերցմամբ, տապալեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» «Ժողովրդի ուժ» շարժման նախաձեռնած օրինագիծը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, որը վերոնշյալ իրադարձությունների ժամանակ գտնվում էր Գերմանիայում, «Իմեդի» հեռուստաընկերության հետ հարցազրույցում անդրադարձավ այդ թեմային եւ հայտարարեց, որ այս իրավիճակում օրենքի նախագծի հետկանչման որոշումը ամենաճիշտն ու ողջամիտն է պետության համար:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԿԱՅԱՑԱՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մարտի 14-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Բրյուսելում հանդիպում ունեցավ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Կողմերը քննարկեցին Եվրամիության թեկնածուի կարգավիճակի ստացման համար Վրաստանի կողմից Եվրահանձնաժողովի հանձնարարականների կատարման ընթացքը:

Նշենք, որ Վրաստանի նախագահը Բրյուսել ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած աշխատանքային այցից հետո, որտեղ հանդիպում ունեցավ ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ, ինչպես նաեւ մասնակցեց Նյու-Յորքում ՄԱԿ-ի Տնտեսական եւ սոցիալական խորհրդի՝ կանանց կարգավիճակի հանձնաժողովի 67-րդ նիստին:

ՇԱԼՎԱ ՊԱՊՈՒԱՇՎԻԼԻ. «ՓԱՍՏՈՐԵՆ, ՄԵՆՔ ԳՏՆՎՈՒՄ ԵՆՔ 12 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ»

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, անդրադառնալով Եվրահանձնաժողովի հանձնարարականների կատարման ընթացքին, նշեց, որ փաստացի երկիրը գտնվում է 12 հանձնարարականների վերջին հատվածում:

- Հաջորդ շաբաթ մենք կստանանք մի քանի հայեցակարգային փաստաթղթեր՝ կապված մարդու եւ առանձին՝ կանանց իրավունքների հետ: Դրանով կկատարվեն 8-րդ եւ 9-րդ հանձնարարականները,- ասաց Շալվա Պապուաշվիլին:

Նրա խոսքով, ցավալի է, որ ընդդիմությունը չի մասնակցում նշված գործընթացին:

- Ցավոք, մեծամասնությունն այդ ամենն անում է մեծ մասամբ միայնակ, քանի որ տեսնում ենք, որ ընդդիմությունը երբեմն չի մասնակցում այդ հարցի կարգավորմանը: Ինչ վերաբերում է «ապաօլիգարխացման» եւ դատաիրավական բարեփոխումների մասին օրենքի նախագծին, ապա մենք ամբողջությամբ կիրականացնենք հանձնարարականները: Քանի որ մինչեւ այժմ ամեն ինչ ճիշտ էր ընթանում, կետերն իրականացվում էին բծախնդրորեն, եւ այդպես էլ կշարունակվի մինչեւ վերջնական լուծում,- ասաց Շալվա Պապուաշվիլին:

ՎԱՐԿԱՆԻՇ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԽՂԵՈՒԹՅԱՆ» ԻՆԴԵՔՍՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ Է

Աշխարհի առաջատար հետազոտական կազմակերպության եւ Վաշինգտոնի N1 վերլուծական կենտրոնի «Heritage Foundation»-ի հետազոտության համաձայն, Վրաստանը «կառավարության բարեխղճության» ինդեքսով ընդգրկվել է աշխարհի լավագույն 40 երկրների շարքում:

Վրաստանը առաջատարն է Կովկասում եւ սեւծովյան տարածաշրջանում, իսկ հետխորհրդային երկրներից զիջում է միայն Բալթյան երկրներին:

Կառավարությունների բարեխղճությունը գնահատվել է հետեւյալ չափանիշներով. կոռուպցիայի ընկալում, կաշառակերության ռիսկ, կոռուպցիայի վերահսկում:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մարտի 15-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն հանդիպում ունեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ:

Հանդիպմանը կարեւորվեցին վրաց եւ հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը եւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման անհրաժեշտությունը:

Հայաստանում Վրաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն ճանաչողական հանդիպումներ ունեցավ Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի. Հայաստանի արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի, Հայաստանի ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արմեն Աբազյանի, Հայաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի, Հայաստանի գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի, Հայաստանի զբոսաշրջության կոմիտեի ղեկավար Սիսիան Պողոսյանի հետ:

ԱՇՈՏ ՄՍԲԱՏՅԱՆԸ՝ ԱՋԱՐԻԱՅՈՒՄ

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը մարտի 11-14-ը գտնվում էր Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում:

Այցի շրջանակներում, Աշոտ Սմբատյանը հանդիպումներ է ունեցել Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Թոռնիկե Ռիժվածեի, Աջարիայի Գերագույն խորհրդի նախագահ Դավիթ Գաբաիձեի, Բաթումիի քաղաքապետ Արչիլ Չիքովանու, կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար Մայա Խաչիշվիլու հետ:

Հանդիպումներում քննարկվեցին վրացահայկական հարաբերությունների հարցեր, անդրադարձ կատարվեց Աջարիայի Ինքնավար Հանրապետության ու Հայաստանի, Բաթումիի ու Վանաձորի միջեւ համագործակցության խորացման հեռանկարներին:

Բաթումիում գործող Վրաստանի Սահմանադրական դատարանում Աշոտ Սմբատյանը հանդիպում ունեցավ դատարանի նախագահ, պրոֆեսոր Մերաբ Տուրավայի հետ:

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

«ՄԻՋԻՆՔԻ» ՈՒՐԱԽ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մարտի 15-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նշեց Մեծ Պահքի 24-րդ օրը: Հայոց եկեղեցիներում Պահքի կիսման արարողությունը նշում են տոնականորեն եւ անվանում՝ «Միջինք»:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցիներում երեկոյան կատարվեց «Հանգստյան» ժամերգություն: Հոգեւոր հայրերի կողմից ներկաներին փոխանցվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությունը եւ անդրադարձ կատարվեց օրվա խորհրդին՝ հավատացյալներին հորդորելով սիրով եւ հավատքով անցնել Պահքի մնացյալ երկրորդ կեսը:

Եկեղեցական այս տոնը ուղեկցվում է ժողովրդական մի շարք սովորույթներով ու ավանդույթներով: Վիրահայության շրջանում «Միջինքը» նշվում է նա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՎԱՐՉԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մարտի 14-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Մթածմինդայում պաշտոնական ընթրիքի ժամանակ, հյուրընկալեց Վրաստան այցելած Եվրամիության պատվիրակության անդամներին:

Կառավարության ղեկավարը եվրոպացի դիվանագետների հետ ոչ պաշտոնական միջավայրում քննարկեց Վրաստանի եվրահինտեգրման գործընթացը:

Նշենք, որ Թբիլիսիում անցկացվեց Եվրամիության ներկայացուցչության կողմից կազմակերպված Եվրամիության բարձր մակարդակի տարածաշրջանային ամբասադորիալը: Տարածաշրջանային դեսպանության միջոցառմանը մասնակցեցին ԵՄ արտաքին գործողությունների ծառայության եւ Եվրոպական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնյաներ: Նրանց թվում էին նաեւ ԵՄ պատվիրակության, Արեւելյան գործընկերության եւ Կենտրոնական Ասիայի երկրների, ինչպես նաեւ Թուրքիայի եւ Ավստրիայի ղեկավարները:

Պաշտոնական ընթրիքին նշվեց, որ Վրաստանում ամբասադորիալի անցկացումն ընդգծում է Վրաստանի նշանակությունը տարածաշրջանում Եվրամիության համար, այդ թվում՝ Վրաստանի՝ որպես ուժեղ դաշնակցի դերը եվրոպական եւ Կենտրոնական Ասիայի երկրների միջեւ համագործակցության ամրապնդման գործում:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԸ՝ ԱՋԱՐԻԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներկա գտնվեց Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում մատուցվող պատարագին: Այնուհետեւ Աջարիայի հայության հոգեւոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանի ուղեկցությամբ շրջայց կատարեց եկեղեցուն կից գործող Ալեքսանդր Մանթաշյանցի անվան կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոնում, որին հաջորդեց հանդիպումը Բաթումիի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Աշոտ Սմբատյանը եղավ նաեւ Բաթումիի թիվ 4 հանրային դպրոցում, որտեղ դասավանդվում է «Հայոց լեզու եւ գրականություն» առարկան:

Աջարիա կատարած այցելությանը Աշոտ Սմբատյանին ուղեկցում էին Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետները:

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԿՑՈՒՑԱԴՐՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԿՂԸ, ՈՐՏԵՂ ՊԱՀՎՈՒՄ ԷՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՍԻՐՏԸ

Մարտի 23-24-ին Թբիլիսիում կանցկացվեն Մեծն Հովհաննես Թումանյանի մահվան 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ: Մայրաքաղաքի Գիորգի Լեոնիձեի անվան վրաց գրականության թանգարանում հանդիսավորապես կբացվի «Թումանյանը եւ Թիֆլիսը» խորագիրը կրող ցուցահանդեսը: Իսկ հաջորդ օրը Վ.Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայում կանցկացվի հիշատակի համերգ:

Այս մասին «Վրաստան» թերթի խմբագրություն զանգահարեց եւ ուրախությամբ հայտնեց **Թբիլիսիի Գիորգի Լեոնիձեի անվան վրաց գրականության թանգարանի տնօրեն Լաշա Բաքրաձեն՝** մասնավորապես ընդգծելով.

- Սա եւս մեկ, այս անգամ բացառիկ առիթ է առնչվելու վրաց-հայկական բարեկամության ամենաբարի խորհրդանիշներից մեկի՝ Հովհաննես Թումանյանի հետ, ով վերստին միավորելու է դարավոր բարեկամներիս: Հուսով եմ, ցուցահանդեսային օրերը բազմամարդ են լինելու,- մեզ հետ զրույցում ասաց թանգարանի տնօրենը եւ հավելեց.

Բնականաբար մուտքն ազատ է: Մեր թանգարանը գտնվում է Գիորգի Ճանտուրիա 8 հասցեում, մոտավոր պատկերացում կազմելու համար ասեմ, որ սա Շ.Ռուսթավելու պողոտայում գտնվող «Մարիոտ» հյուրանոցից դեպի ցած իջնող ճանապարհն է:

«Վրաստան» թերթի հարցին, թե ի՞նչ կցուցադրվի Թբիլիսիում, **Երեւանի Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրեն Անի Եղիազարյանը** պատասխանեց.

- Բանաստեղծի երեւանյան թանգարանից հատուկ բերվելու է նրա անձնական հավաքածուի 26 նմուշ: 70 տարվա ընդմիջումից հետո, առաջին անգամ Թբիլիսի են վերադառնում Թումանյանի հավաքածուի քանդակները, գրքերն ու ձեռագրերը, ինչպես նաեւ այն պատմական արկղը, որտեղ պահվել է Ամենայն Հայոց Բանաստեղծի սիրտը:

Ցուցահանդեսի հիմքում վրաց ժողովրդի, նրա գրականության ու մշակույթի հանդեպ Հովհ.Թումանյանի հետաքրքրությունն ու հարգանքը, վրաց գրողների, արվեստի ու գիտության գործիչների կողմից փոխադարձ անկեղծ սիրո ու հարգանքի, բարոյական բարձր ըմբռնումների հուշագրությունն է:

Նշենք, որ «Թումանյանը եւ Թիֆլիսը» խորագիրը կրող ցուցահանդեսը կգործի մինչեւ ապրիլի 14-ը ներառյալ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

«ՄԻՋԻՆՔԻ» ՈՒՐԱԽ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ բաղարջով կամ գաթայով: Խորանի առջեւ շարվեցին այդ օրվա համար հատուկ թխած տարատեսակ գաթաները, որոնք օրհնվեցին եւ բաժանվեցին ժողովրդին:

«Միջինքի օրը» առանձնահատուկ շքեղությամբ եւ գաթայի փառատոնով նշվեց նաեւ Սամցխե-Ջավախեթիի ու Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքիի «Սուրբ Խաչ», Ախալցիխեի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», Նինոծմինդայի «Սուրբ Սարգիս» եկեղեցիներում եւ հարակից գյուղերում, Բաթումիի «Սուրբ փրկիչ» եկեղեցում, Ծալկայի եւ Ասպինձայի շրջանների գյուղերում, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հայոց եկեղեցիներում, իսկ Ռուսթավի քաղաքի «Սուրբ Գրիգոր Նարեկացի» հոգեւոր, կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնում գաթայի փառատոնով «Միջինքը» կնշանավորվի կիրակնօրյա Սուրբ Պատարագից հետո:

ԱՄՆ

ՍՆԱՆԿԱՑԵԼ ԵՆ ԵՐԿՈՒ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՆԿԵՐ

ԱՄՆ-ում փակվել են Silicon Valley Bank եւ Signature Bank խոշորագույն բանկերը, ինչը կարող է համակարգային մեծ ճգնաժամ առաջացնել: ԱՄՆ նախագահ Ջո Բայդենն ամերիկյան բանկային համակարգի ներկայիս խնդիրների համար մեղադրել է պետության նախկին ղեկավար Դոնալդ Թրամփի վարչակազմին:

- Օբաման-Բայդենի վարչակազմի ժամանակ մենք խիստ պահանջներ ենք ներկայացրել այնպիսի բանկերին, ինչպիսիք են Silicon Valley Bank-ն ու Signature Bank-ը, որպեսզի համոզվենք, որ ճգնաժամը, որը տեսանք 2008-ին, չկրկնվի: Ցավոք, նախորդ վարչակազմը չեղյալ է հայտարարել այդ պահանջներից մի քանիսը»,- մարտի 13-ին նշել է Բայդենը բանկային համակարգի խնդիրներին վերաբերող ելույթի ժամանակ:

Նա ընդգծել է, որ Կոնգրեսի եւ բանկային կարգավորող մարմինների խնդիրն է մեծացնել վարկային հաստատությունների նկատմամբ պահանջները՝ նվազեցնելով նոր սնանկությունների հավանականությունը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՍԵՎ ԾՈՎՈՒՄ ԿՈՐԾԱՆՎԵԼ Է ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱԹՍ

Մարտի 14-ին Սեւ ծովի երկնքում ռուսական երկու Սու-27 ինքնաթիռ որսացել է ամերիկյան MQ-9 Reaper հետախուզական ԱԹՍ-ն: ԱՄՆ Զինված ուժերի եվրոպական հրամանատարությունը (EUCOM) հայտնել է, որ ռուսական կործանիչներն իրականացրել են ԱՄՆ-ի զինված ուժերին պատկանող ԱԹՍ-ի «ոչ անվտանգ եւ ոչ պրոֆեսիոնալ կալանում»:

Ամերիկյան կողմը նշում է, որ իր MQ-9 Reaper հետախուզական ԱԹՍ-ն բախվել է ռուսական Սու-27 կործանիչներին Սեւ ծովի միջազգային օդային տարածքում, ապա՝ ընկել ջուրը:

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հերքում է բախման մասին տեղեկությունը եւ պնդում, որ անօդաչու թռչող սարքն անջատված հաղորդիչներով թռչում էր դեպի Ղրիմի թերակղզի:

ԲԵԼԱՌՈՒՍ

ՄԱՀԱՊԱՏԻԺԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է

Բելառուսում մարտի 25-ից ուժի մեջ կմտնեն քրեական պատասխանատվության օրենսգրքերի ուղղումները, որոնք պետական դավաճանության համար մահապատիժ են նախատեսում պաշտոնյաների ու զինծառայողների համար, նաեւ քրեական պատասխանատվություն՝ ահաբեկչություն քարոզելու եւ բանակը վարկաբեկելու համար:

Օրենքը նախատեսում է պաշտոնատար անձի կողմից կատարված պետական դավաճանության համար քրեական պատասխանատվությունը տարածել պետական պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց վրա: Դրա հետ մեկտեղ, պաշտոնյայի կամ զինծառայողի կողմից պետությանը դավաճանելու համար սահմանվում է պատժի բացառիկ միջոց՝ մահապատիժ կիրառելու հնարավորություն:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ ՕԿՈՒՊԱՆՏՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 160 ՀԱԶԱՐԸ

Ուկրաինայի Զինված ուժերի գլխավոր շտաբի տեղեկատվությամբ, 2022 թվականի փետրվարի 24-ից մինչեւ ընթացիկ տարվա մարտի 17-ը ներառյալ, ուկրաինական Զինված ուժերի կողմից ոչնչացվել է 163 320 ռուս զինծառայող:

Գենշտաբի տեղեկատվությամբ, վերոնշյալ ժամանակահատվածում ուկրաինական Զինուժի կողմից ոչնչացվել է 3506 տանկ, 6823 զրահամեքենա, 2552 հրետանային համակարգ, 493 զալպային կրակի ռեակտիվ համակարգ, 259 հակաօդային պաշտպանության համակարգ, 305 ինքնաթիռ, 290 ուղղաթիռ, 5401 ավտոմեքենա, 18 մարտանավ, 2145 անօդաչու թռչող սարք, 258միավոր հատուկ տեխնիկա, 907 թեւավոր հրթիռ:

ՈՒԿՐԱԻՆԱՆ ԵՐՐՈՐԴՆ Է ԶԵՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՇԱՎԱԼՈՎ

2022 թվականին Ուկրաինան աշխարհում երրորդ տեղն է զբաղեցրել սպառազինությունների ներմուծման ծավալով՝ Կատարից եւ Հնդկաստանից հետո:

Ստոկհոլմի Խաղաղության խնդիրների հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տարեկան զեկույցի համաձայն, 2018 թ.-ից ի վեր հինգ տարում Ուկրաինան այս ցուցանիշով 14-րդ տեղն է զբաղեցրել՝ զենքի համաշխարհային ներմուծման 2 տոկոս մասնաբաժնով: Կիեւի խոշորագույն մատակարարներն են եղել ԱՄՆ-ը (34 տոկոս), Լեհաստանը (17 տոկոս) եւ Գերմանիան (11 տոկոս): Ընդ որում, դեպի Ուկրաինա ԱՄՆ-ից զենքի արտահանումը, որը կտրուկ աճել է Ռուսաստանի կողմից ռազմական գործողությունների մեկնարկից հետո, ծավալով զիջում է ԱՄՆ-ից Քուվեյթ, Սաուդյան Արաբիա, Կատար եւ Ճապոնիա մատակարարումներին:

Ըստ լրատվական գործակալությունների

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Մարտի 16-17-ը պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Միացյալ Թագավորության արտաքին համագործակցության եւ զարգացման հարցերով պետքարտուղար Ջեյմս Քլեւերլին:

Այցի շրջանակներում, անգլիացի պաշտոնատար անձը հանդիպումներ ունեցավ իր վրացի գործընկեր Իլիա Դարչիաշվիլու եւ Վրաստանի կառավարության ղեկավար Իրակլի Ղարիբաշվիլու հետ:

Նշենք, որ դա Միացյալ Թագավորության արտաքին եւ համագործակցության հարցերով պետքարտուղարի առաջին այցն է Վրաստան 2016 թվականից ի վեր:

Թբիլիսիում կայացած հանդիպումներում Ջեյմս Քլեւերլին հայտարարեց նոր ֆինանսական օգնության մասին՝ Ռուսաստանի չարորակ միջամտության դեմ տարածաշրջանային դիմակայունությունը բարձրացնելու համար:

Վրաստանում ժողովրդավարության ամրապնդման նպատակով, Մեծ Բրիտանիան տրամադրում է նաեւ 500,000 ֆունտ ստեռլինգ, որի նպատակն է ստեղծել միջավայր 2024 թվականին ազատ ու արդար ընտրությունների համար եւ պաշտպանել դրանք արտաքին միջամտությունից:

ՈԼՈՐՏ

ԽՈՇՈՐ ՏՈՒԳԱՆՔ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մարտի 16-ին Վրաստանի կառավարության նիստում գործադիրը քննարկեց օրենքի նախագիծը, ըստ որի, խիստ տուգանք է սահմանվել գյուղատնտեսական տարածքներ այրելու համար:

Օրենքի նախագծով նոր վարչական տուգանք է սահմանվում հողամասում հացահատիկային բույսերը (ներառյալ՝ դրանց գագաթները) հրդեհելու համար՝ 1000 լարի ֆիզիկական եւ 2000 լարի իրավաբանական անձանց համար:

Ինչպես տեղեկացնում է կառավարության մամուլի ծառայությունը, «Օրենքի նախագիծը պատրաստվել է բերքահավաքից հետո, գյուղատնտեսական ցանքատարածությունները հրկիզելու համատարած վնասակար պրակտիկայի պատճառով, որը մեծ վնաս է հասցնում հողին ու շրջակա միջավայրին: Բացի այդ, մեծ է հրդեհի տարածման հավանականությունը մոտակա հողատարածքներ, դաշտեր, անտառներ կամ բնակավայրեր:

Կառավարության նիստում ընդունվել է «Վրաստանի մունիցիպալիտետներում (բացառությամբ՝ ինքնակառավարվող քաղաքների) կանաչ բույսերի ընտրության, տնկարկման եւ խնամքի պայմանների մասին» որոշման նախագիծը: Նոր նախագծի համաձայն, քաղաքային միջավայրում կստեղծվեն հանգստի գոտիներ, որոնք կնպաստեն բնակչության առողջության, բարեկեցության եւ կյանքի որակի բարելավմանը:

Այս ծրագրի նպատակն է նպաստել քաղաքապետարաններում քաղաքային տարածքների կանաչապատման միասնական եւ պատշաճ համակարգի ներդրմանը՝ հաշվի առնելով կանաչ բույսերի ընտրության, տնկարկման եւ պահպանման պայմանները:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԼԵՎԱՆ ԻՈՍԵԼԻԱՆՈՒՆ ԿՓՈԽԱՐԻՆԻ ՔԵԹԵՎԱՆ ԹՈՒՐԱԶԱՇՎԻԼԻՆ

Վրաստանի խորհրդարանում «Քաղաքացիներ» կուսակցության ցուցակից Լեւան Իոսելիանուն կփոխարինի Քեթեւան Թուրազաշվիլին: Հիշեցնենք, որ Լեւան Իոսելիանին ընտրվել է Վրաստանի ժողովրդական պաշտպան:

Ընթացակարգային հարցերի եւ կանոնակարգերի հանձնաժողովը կքննարկի Լեւան Իոսելիանու պատգամավորական լիազորությունները Քեթեւան Թուրազաշվիլուն փոխանցելու հարցը:

ՅԱՎԱԼԻ ՄԻՋԱԴԵՊ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Բաթումիի զբոսայգում, Արդագան լճի ափի մոտ տեղադրված ցատկացանցի վրա վնասվածք ստացած 9-ամյա երեխան մահացել է: Դեպքը պատահել էր մարտի 12-ի երեկոյան, երբ ուժեղ քամին վնասել էր ցատկացանցը, որի վրա այդ պահին գտնվում էին երկու եղբայրները: Երկրորդ՝ երեք տարեկան երեխային, ծանր վնասվածքներով տեղափոխել են քաղաքային հիվանդանոց:

Տեղի ունեցածի պատճառով քրեական գործ է հարուցվել ցատկացանցի անվտանգության համար պատասխանատու Էդուարդ Աբրահամյանի դեմ:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(17 մարտի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.5832
1 ԵՎՐՈ	2.7397
100 ՌՈՒԲԼԻ	3.3859
1000 ԴՐԱՄ	6.6577

ՏԱՐԱՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Մարտի 13-ին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում պետլիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին աշխատանքային հանդիպում անցկացրեց տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում ընթացիկ ու ծրագրված ենթակառույցային նախագծերը: Նշվեց, որ ներկա դրությամբ տարածաշրջանում ծրագրված է շուրջ 370 ենթակառույցային նախագծեր, որոնք ֆինանսավորվելու են տարածաշրջանային զարգացման հիմնադրամից, «Լեռան հիմնադրամից», տեղական բյուջեից եւ գյուղի աջակցության ծրագրից: Ինչպես նշվեց հանդիպմանը, տարածաշրջանում իրականացվելիք ենթակառույցային նախագծերի քանակն աստիճանաբար ավելացվելու է:

Աշխատանքային հանդիպմանը մասնակցեցին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի փոխնահանգապետ Դավիթ Վարդիաշվիլին, երկրամասային ծառայության վարչության ղեկավարներն ու երկրամասի կազմի մունիցիտպալիտետների քաղաքապետերը:

ՇԱԼԿԱ. ՉԻՖԹՔԻԼԻՍԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԵՆԻՍԻ ԹԻՄԸ՝ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂ

Շալկայի մունիցիպալիտետի Չիֆթքիլիսայի հանրային դպրոցի սեղանի թենիսի թիմը, դպրոցական սպորտային օլիմպիադայի շրջանակներում հանդես գալով Շալկայի մունիցիպալիտետի անունից, Ռուսթավիում անցկացված Քվեմո Քարթլիի տարածաշրջանային առաջնությունում գրավեց պատվավոր առաջին տեղը:

Ինչպես «Վրաստան» թերթին տեղեկացնում է դպրոցի մանկավարժ **Գեորգի Ոսկանյանը**, չնայած որոշակի կազմակերպչական բացթողումների, Չիֆթքիլիսայի դպրոցականները հաղթող դարձան տարածաշրջանի 7 ուժեղագույն թիմերի պայքարում:

Վերոնշյալ հաղթանակը, դպրոցի թիմին հնարավորություն ընձեռեց անցնել առաջնության երրորդ տուր (ամռանը սպասվում են Վրաստանի առաջնության խաղերը): Սա գյուղի սպորտային պատմության մեծագույն նվաճումն է:

էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ. ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Մարտի 16-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանն ու մունիցիպալիտետի քաղաքապետարանի՝ երեխաների պաշտպանության եւ աջակցության բաժնի պետ Էդգար Ստամբոլցյանը հանդիպեցին Նինոծմինդայի մունիցիպալիտետում ապրող սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ծնողների ու ընտանիքի անդամների հետ:

Հանդիպմանը խոսվեց բոլոր այն խնդիրների մասին, որոնց առնչվում են նման երեխաները:

Քաղաքապետ Անի Մոսոյանը նշեց, որ քաղաքապետարանը հնարավորինս կօգնի բոլոր այն երեխաներին, ովքեր ունեն նման անհրաժեշտություն:

* * *

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը «Քաղաքացիական կրթություն» առարկայի շրջանակներում հանդիպեց Նինոծմինդայի թիվ 3 հանրային դպրոցի տնօրեն Արմենուհի Ղարսլյանի եւ 8-րդ դասարանի աշակերտների հետ:

Քաղաքապետը հաճույքով պատասխանեց աշակերտների կողմից տրված տարաբնույթ ու հետաքրքիր հարցերին եւ նշեց, որ շատ կարեւոր են նման հանդիպումներն ու ապագայում կկրեն շարունակական բնույթ:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ. ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Ախալքալաքիի քաղաքապետարանի վարչական շենքում անցկացվեց ընթացիկ տարվա սկզբին Բաթումիում անցկացված Վրաստանի բռնցքամարտի առաջնությունում հաղթանակած ախալքալաքցի մարզիկների պարգեւատրման արարողությունը:

Պատվոգրեր ու նվերներ ստացան Ախալքալաքիի մարզահամալիրի 8 մարզիկ եւ 3 մարզիչ: Պարգեւատրվեցին երկրի առաջնության հաղթողներ Արտյուշ Գոմցյանը (60 կգ քաշային կարգ), Արտյոմ Յորդանյանը (92 կգ), Արամ Խրիկյանը (57 կգ), արծաթե եւ բրոնզե մեդալակիրներ Արմեն Գրիգորյանը (60կգ), Արտակ Էլիզբարյանը (75կգ), Երիտասարդական առաջնության հաղթողներ Սամվել Ղազարյանը (80կգ), Գոռ Այվազյանը (54կգ), արծաթե մեդալակիր Պավլիկ Էլոյանը (86կգ):

Պարգեւներ ստացան նաեւ մարզիչներ, Վրաստանի վաստակավոր մարզիչ, Ախալքալաքիի մարզահամալիրի տնօրեն Արտյոմ Էլիզբարյանը, Վենեդիկ Ղազարյանը, Գագիկ Էլիզբարյանը եւ լավագույն մրցավար Արտյուշ Էլիզբարյանը:

Մարզիկներին պարգեւներն ու նվերները հանձնեց ու նրանց նորանոր հաջողություններ մաղթեց Ախալքալաքիի քաղաքապետ Մելքոն Մակարյանը:

Արարողությանը մասնակցեցին Ախալքալաքիի քաղաքապետի առաջին տեղակալ Թեյմուրազ Մճեդլիձեն, փոխքաղաքապետ Մկրտիչ Մղդեսյանը, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանն ու ինքնակառավարման միավորի այլ ներկայացուցիչներ:

ԲԱՆԱԿ

ՋՈՒԱՆՇԵՐ ԲՈՒՐՃՈՒԼԱՃԵ. «ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԿԻՐԱՌՎԻ ՄԻԱՅՆ ԿԱՄԱՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ»

ՄՇԱԿԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՆՔ ՁՈՐԱԿՈՉԻ ՀԿՈՒՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեն հանրությանը ներկայացրեց գերատեսչության կողմից մշակված «Պաշտպանության օրենսգրքի» նախագիծը, որը բանակի մարտունակության ամրապնդման, հուսալի, պատրաստված ռեզերվի նախապատրաստման լուրջ նախադրյալներ է ստեղծում:

- Սխալ պրակտիկան, որն այսօր ունենք, որ զորակոչիկները պարտադիր ծառայություն են անցնում տարբեր գերատեսչություններում, այլեւս չի լինի, եւ դա չի ծառայում երկրի համար պատրաստված ռեզերվ ստեղծելու նպատակին,- մամլո ասուլիսին ասաց պաշտպանության նախարարն ու հավելեց, որ Վրաստանի նման մարտահրավերներ ունեցող երկրի համար ամբողջական պաշտպանության սկզբունքն այլընտրանք չունի:

- Մենք այլընտրանք չունենք, բացի նրանից, որ երկիրն ունենա լավ պատրաստված ռեզերվ: Այս հարցում բոլորս համաձայն ենք՝ ե՛ւ մենք, ե՛ւ մեր գործընկերները,- ասաց Ջուանշեր Բուրճուլաձեն:

- Փաստաթղթերը, իրավական ակտերը կարգավորում են մեր կարճաժամկետ ու երկարաժամկետ զարգացումը: Բոլոր փաստաթղթերը մշակվել են մեր գործընկերների հետ միասին, ուսումնասիրել ենք օրենսգիրքը,- նշեց պաշտպանության նախարարը:

Նրա խոսքով, ներկայացրած նախագիծը նախատեսում է պարտադիր զինվորական ծառայություն անցնել ավելի ճկուն, պարզեցված պայմաններում, ինչը կօգնի հասնել հիմնական նպատակներից մեկին՝ երկրում պատշաճ պատրաստված ռեզերվի ստեղծմանը:

Ջուանշեր Բուրճուլաձեի խոսքով, պարտադիր զինվորական ծառայությունն ուսանողների համար կկիրառվի միայն կամավոր սկզբունքով.

- Հաշվի ենք առել բուհում սովորելու ընթացքը, մեր ուսանողներին հնարավորություն ենք տվել ուսման ընթացքում ճկուն համակարգի միջոցով արձակուրդներին տարեկան մեկ ամիս անցնել պարտադիր ծառայություն: Ավելին, եթե երիտասարդն ունի բարձրագույն կրթություն եւ կամավոր չի օգտվել այն ծրագրից, որն առաջարկում ենք բարձրագույն կրթության ընթացքում: Բուհն ավարտելուց հետո, մենք առաջարկում ենք նաեւ ավելի ճկուն ծրագիր: Ցանկացած քաղաքացի կարող է օգտվել ծրագրից եւ գրանցվել պահեստազորում, միաժամանակ հարմարավետ պայմաններ ենք ստեղծելու, որպեսզի նրա գործունեությունը չտուժի եւ այլ ֆինանսական վնասներ չստանա: Մենք չնահանջեցինք, բայց այնպիսի պայմաններ ստեղծեցինք, որ կարծում ենք՝ ուսանողներից շատ ավելի պահանջարկ կունենանք, քան ամեն տարի,- ասաց Ջուանշեր Բուրճուլաձեն:

Պաշտպանության նախարարը հանրությանը հիշեցրեց, որ Վրաստանում դեռեւս գործում է պարտադիր զինվորական ծառայությունը, եւ նշված բարեփոխումը չի բերի էական, արմատական փոփոխության, այլ կնպաստի զորակոչիկների ազգային ծառայության անցմանն ավելի ճկուն ու պարզ համակարգի:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ «ԻՄԵԴԻ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՕՐԻՆԱԳԾԻ ՀԵՏԿԱՆՉՆՈՒՄՆ ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԽԵԼԱՄԻՏ ՈՐՈՇՈՒՄ ԷՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մենք մի կողմից ցույց տվեցինք, որ թույլ չենք տա ոչ մեկին ապակայունացում կազմակերպել, մյուս կողմից նշեցինք, որ գիտենք նրանց շատ վատ ծրագրերի մասին,- նշեց վարչապետն ու հավելեց, որ «ընդդիմության խնդիրն էր պահպանել քաոսը, մշտական ապակայունացումը, եւ իրենք կարող էին սպանել որոշ երիտասարդների»:

Վարչապետի խոսքով, կառավարությունը հոգացել է երկրի կայունության եւ խաղաղության համար՝ ներկայացնելով օրենքի նախագիծը:

- Շատ հստակ ասված էր, ես էլ օրինագծի քվեարկության օրը հայտարարեցի, որ մեր թիմը որոշել է. նախագիծն առաջին ընթերցմամբ ընդունելու եւ անմիջապես ուղարկելու ենք Վենետիկի հանձնաժողով, որից հետո մենք հավանաբար կունենանք 3-4 ամիս այս քննարկումները շարունակելու համար: Այս իրավիճակում օրենքը ետ կանչելու որոշումն ամենաճիշտն ու ողջամիտն էր պետության համար: Մենք ասացինք, որ այս քայլով մենք հոգ ենք տանում այն մասին, ինչը մեզ եւ բոլորի համար ավելի թանկ է՝ մեր երկրի կայունությունը, խաղաղությունը, ոչ թե պատերազմն ու ոչ պատերազմական քաղաքականությունը,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

«ՄԵՆՔ ԹՈՒՅԼ ՉԵՆՔ ՏԱ ԿՈՐԾԱՆԵԼ ԵՐԿԻՐԸ»

«Իմեդի» հեռուստատեսությանը տված հարցազրույցում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, անդրադառնալով վերջին օրերին Թբիլիսիում ծավալված իրադարձություններին, հայտարարեց, որ, ընդհանուր առմամբ, ի հայտ եկավ մեր մարդասիրական դեմքը, մեր ժողովրդավարությունը, միաժամանակ մեր իշխանության խստությունը, հզորությունը:

- Մենք որոշում ընդունեցինք կոլեկտիվ եւ, կարծում եմ, որ դա միակ ճիշտ եւ ազգային շահերին համապատասխան որոշում էր: Վերջում ցանկանում եմ դիմել մեր թշնամիներին, դուք կրկին պարտվեցիք, երբեք չեք կարողանա մեր երկիրը կործանել: Նրանք մեկ անգամ արդեն կործանել են երկիրը, եւ երկրորդ անգամ նման հնարավորություն նրանց չենք տա,- հայտարարեց վարչապետը:

Ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին իր հարցազրույցում, Վանո Մերաբիշվիլին բացահայտ ասաց, որ իրենց խնդիրն է հեղաշրջում անելը եւ պատերազմ սկսելը, Վրաստանում երկրորդ ճակատի բացումը:

- Այսօր Խաբեիշվիլին Մերաբիշվիլի-Կեզերաշվիլի տանդեմի կողմից կառավարվող անձ է: Դա բոլորը լավ գիտեն, դիմակայող երկրորդ կողմը՝ Ախալաիա-Մելիա խմբավորումն է: Նրանց խնդիրն է երկրում հեղաշրջում կատարել եւ սկսել պատերազմ Ռուսաստանի դեմ: Այս ողջ սադրանքը սկսվեց Սաակաշվիլու Վրաստան գալով եւ երկրի ներսում իրականացված քայքայիչ գործողություններով,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ «մենք գիտեինք նրանց վատ ծրագրերի մասին, սպասվող քաոսի մասին, ուստի ասացինք, որ այս քայլով պահպանում ենք այն, ինչը թանկ է բոլորիս համար՝ կայունությունը, ոչ թե պատերազմական քաղաքականությունը»:

Վրաստանի վարչապետը կտրականապես հայտարարեց, քանի դեռ «Վրացական երազանքը» իշխանություն է, «թույլ չի տա Վրաստանում երկրորդ ճակատ բացել», եւ որ կառավարության գլխավոր առաքելությունն է «ուժեղացնել Վրաստանի ինքնիշխանությունը, անկախությունը», իսկ գլխավոր երազանքը Վրաստանի վերամիավորումն ու արժանապատիվ միացումն է Եվրամիությանը:

«ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԵՆԱԹԱՓԱՆՑԻԿՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ»

Անդրադառնալով առանձին կազմակերպությունների կողմից բարձրացված թափանցիկության թեմային՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին «Իմեդի» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում նշեց, որ Վրաստանի իշխանությունը համարվում է ամենաթափանցիկն աշխարհում:

- Եթե թեկուզ վերցնենք բյուջեի թափանցիկությունը, այն առաջինն է աշխարհում: Նորանկախ Վրաստանի պայմաններում ոչ կառավարական կազմակերպությունները ստացել են հարյուրավոր միլիոն դոլարներ: Նրանց նպատակների, ակտիվությունների, ֆինանսական վիճակի մասին շատ քիչ տեղեկություն ունենք: Վերոնշյալ օրինագծով պահանջում էինք նվազագույն թափանցիկություն եւ նվազագույն հաշվետվություն մեր հասարակության առջեւ,- նշեց վարչապետը:

- Օրինակ, դրանց թվում է հայտնի «Սիրցխվիլիա» («Ամոթ է») ապակառուցողական շարժումը, որը ֆինանսավորվում է արտասահմանյան կազմակերպությունների կողմից, ով պահանջում էր կառավարության ու իմ հրաժարականը:

Գիտենք նաեւ «Թբիլիսի պրայդ» սադրիչ շարժման մասին, որը նախատեսում էր խիստ սադրիչ շքերթներ անցկացնել: EMC-ն (այսօրվա «Սոցիալական արդարության կենտրոն»)՝ կազմակերպություն, որը ծառայում է պատերազմի հրահրմանը՝ նույնը, ինչ ISFED-ը («Արդար ընտրությունների ու ժողովրդավարության միջազգային հանրություն»), որը ընտրությունների ժամանակ զուգահեռ հաշվարկի կեղծ տվյալներ էր ներկայացնում եւ այլն: Մեր խնդիրն էր իմանալ, թե ինչի է ծառայում նրանց գործունեությունը,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ իշխանությունը կայացրել է «ամենաճիշտ, պետական որոշումը»՝ ետ կանչելով այդ օրենքը, եւ դրանով ցույց է տվել, որ թույլ չի տա որեւէ մեկին՝ ապակայունացնելու իրավիճակն ու Վրաստանում «սանձազերծել երկրորդ ճակատը»:

Էջը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՃԵ. «ՄԵՐ ՈՐՈՇՈՒՄԸ ԲԱԺԱՐՁԱԿԱՊԵՍ ԱՌԱՆՁ ԱԼՅԸՆՏՐԱՆՔԻ ԷՐ»

- «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրինագծի վերաբերյալ մենք ամեն ինչ արեցինք, որ հանրությանը տեղեկատվություն տրամադրենք, թեեւ մյուս կողմից կար բացարձակ մակերեսային, կեղծ, բայց ուժեղ մեսիջ: Ցավոք, չկարողացանք փաստարկներով ուժեղ մեսիջ փոխանցել, եւ սա այն իրականությունն է, որը ստեղծվել է,- հայտարարեց խորհրդարանական մեծամասնության ղեկավար, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն:

- Ինչ վերաբերում է որոշման փոփոխությանը, բնականաբար, սա ունի իր քաղաքական լուրջ կշիռը, բայց ի վերջո իշխանությունը, պետությունը հերթական անգամ ցույց տվեց իր բնույթը: Այն տարբերվում է նրանով, ինչով աչքի էր ընկնում նախորդ իշխանության տրամադրվածությունը, որը հիմնված է կեղծ տեղեկատվության վրա: Մենք տեսանք, որ իրավիճակից օգտվում էին որոշակի ուժեր, դրանց թվում՝ երիտասարդները, վտանգի տակ էին դնում մարդկանց, եւ մենք չէինք ուզում, որ այս գործընթացը շարունակվեր: Մենք հոգացել ենք մարդկանց, խաղաղության, հանգստության մասին: Կարծում եմ, որ փոփոխության որոշումը բացարձակապես անխուսափելի էր՝ չնայած այն քաղաքական կշռին, որն ուներ մեզ համար, բայց մեր սկզբունքը մարդասիրությունն է եւ իրերի նկատմամբ հաշվետվողականությունը, նույնիսկ այն դեպքում, երբ որոշակի ընկալումներ կարող են չունենալ օբյեկտիվ հիմք,- ընդգծեց Իրակլի Կոբախիձեն:

ԿԱԽԱ ԿԱԼԱՃԵ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՌԱԿՏՈՒՄ ՉԻ ՍՊԱՌՆՈՒՄ»

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, խորհրդարանական մեծամասնության պառակտման եւ փլուզման վերաբերյալ տարածված տեղեկատվությունը սուտ է եւ ուղղված է հանրության ապակողմնորոշմանը:

- Խորհրդարանական մեծամասնությանը ոչինչ չի սպառնում: Եթե կոնկրետ մարդիկ ցանկություն ունեն հեռանալ «Վրացական երազանք» կուսակցությունից, ապա դա նրանց իրավունքն է: Այդ առումով, ոչ մի սահմանափակում կամ արգելք չի եղել եւ առաջիկայում էլ չի լինի,- ասաց Կախա Կալաձեն:

ԱԼԵԿՈ ԷԼԻՍԱՇՎԻԼԻ. «ՅԱՎՈՔ, ՈՐՈՇ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐ ՄԵԿ ՀՈԳՍ ՈՒՆԵՆ՝ ՀՍՏԱԿԱԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»

Ինչպես հայտարարեց «Քաղաքացիներ» կուսակցության առաջնորդ, ընդդիմադիր պատգամավոր Ալեկո Էլիսաշվիլին, որոշ ընդդիմադիրներ հոգս ունեն՝ հստակալ կարգավիճակ եւ դա օգտագործել որպես կուսակցական շահերի պատճառ:

- Ցավոք, ընդդիմության հիմնական հատկանիշը անհետեւողականությունն է: Երբեմն մի բան են ասում, երբեմն՝ մեկ այլ բան: Ստացվում է, որ 12 կետերի կատարումն առաջնային է: Երբ մենք ժամերով աշխատանքային խմբեր էինք ստեղծում, նրանք ոտքի կանգնեցին ու մեզ նախատում էին: Վաշաձեն, Խոշտարիան, մյուսները մեզ մեղադրում են, եւ սա այն ժամանակ, երբ մենք կատարում էինք մեր Եվրամիության տնային աշխատանքը: Ցավոք, որոշ ընդդիմադիրներ մի հոգս ունեն՝ գուցե մենք կարգավիճակ չստանանք, եւ նրանք դա օգտագործեն որպես կուսակցական շահերի պատճառ,- ասաց Ալեկո Էլիսաշվիլին: